Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 622 - Ա որոշման

«Ապրանքների մատակարարում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից «Արցախի Հանրապետության մարդասիրական օգնություն» բարեգործական ծրագրի շրջանակներում 2020 թ. սեպտեմբերի 27-ին ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների սանձազերծման արդյունքում պարտադրված պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության անօթևան մնացած ընտանիքների համար «Midea MVM 5101» մոդելի լվացքի մեքենաների մատակարարում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցների հաշվին
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 29,049,900 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության անօթևան մնացած ընտանիքների անդամները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 30-ից, մինչև օգոստոսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է «Արցախի Հանրապետության մարդասիրական օգնություն» բարեգործական ծրագրի շրջանակներում Արցախի Հանրապետության անօթևան մնացած ընտանիքների համար «Midea MVM 5101» մոդելի լվացքի մեքենաների մատակարարում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 30-ից, մինչև օգոստոսի 30-ը: Արժեքը՝ 29,049,900 դրամ

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Համաձայն կնքված պայմանագրի նախատեսվում է «Midea MVM 5101» մոդելի լվացքի մեքենաների մատակարարում: Արժեքը կազմում է 29,049,900 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

28.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ